

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**ՋԵՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
 (ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)**

1. Պայմանագրային կողմերը

1.1 ՎԱՏԱՌՈՂ

ԱՆՎԱՆՈՒՄԸ		
Հասցեն	Հեռախոսներ	
Բանկային տվյալները		

1.2. ԳՆՈՐԴ

Փոստային կարգաթիվը եւ հասցեն	Հաշվառման քարտի համարը	
Անուն, ազգանուն	Հեռախոսներ	Անձնագրային տվյալներ

2. Պայմանագրի առարկան

2.1. Վաճառողը վաճառում, իսկ գնորդը գնում է ջերմային էներգիա եւ վճարում սույն պայմանագրով սահմանված կարգով:

2.2. Կողմերի փոխհարաբերությունները կանոնակարգվում են "Էներգետիկայի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով, "Ջերմային էներգիայից օգտվելու կանոններով", Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով եւ սույն պայմանագրով:

2.3. Ջեռուցման ժամանակաշրջանի սկիզբը եւ տեւողությունը սահմանվում են տեղական ինքնակառավարման մարմնի կողմից:

3. Ջերմային էներգիայի սակագինը

3.1. Վաճառողի կողմից առաքվող ջերմային էներգիայի համար Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի կողմից սահմանված՝ բնակչությանը տրվող 1 քմ բնակելի մակերեսի ջեռուցման համար՝ _____ դրամ, ջեռուցման ամբողջ ժամանակահատվածի համար՝ _____ օր տեւողությամբ կամ 1 Գկալ ջերմային էներգիայի համար _____ դրամ՝ առավելագույն սակագնից ելնելով, Գնորդի համար ջերմային էներգիայի վաճառքի պայմանագրային գինը սահմանվում է՝ _____ դրամ/քմ 1 քմ բնակելի մակերեսի ջեռուցման համար (ջեռուցման ամբողջ ժամանակահատվածի համար՝ _____ օր տեւողությամբ) կամ _____ դրամ մեկ Գկալ ջերմային էներգիայի համար:

3.2. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի կողմից

ջերմային էներգիայի սակագնի փոփոխման դեպքում, նոր սակագինն ուժի մեջ է մտնում հանձնաժողովի կողմից սահմանված սակագնի ուժի մեջ մտնելու օրվանից, եթե սույն պայմանագրում չեն կատարվել համապատասխան փոփոխություններ կամ չի կնքվել նոր պայմանագիր:

4. Կողմերի պարտավորությունները

4.1. Վաճառողը պարտավորվում է՝

4.1.1 _____ թթ. ջեռուցման ժամանակահատվածում իրականացնել

_____ քմ բնակելի մակերեսով շենքի (բնակարանի) ջեռուցումը:

Ջերմամատակարարման խափանման դեպքում վերականգնել այն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:

4.1.2 Ջեռուցման ողջ ժամանակաշրջանում գնորդի ջեռուցվող տարածքում ապահովել անխափան ջերմամատակարարում՝ պահպանելով 18 օ C-ից ոչ պակաս ջերմաստիճան:

4.1.3 Պարտադիր կերպով իր գրասենյակում կամ կենտրոնական ջերմային հանգույցում (ԿՁՀ) վարել գրանցման մատյան՝ չջեռուցված ընդհանուր ժամանակահատվածի գրանցման համար: Գրանցում կարող է կատարվել նաև գնորդի կամ նրա լիազորված անձի հետ համատեղ՝ տեղում ստուգման արդյունքների հիման վրա:

Հաշվարկային ամսվա վերջում գնորդի կամ նրա լիազորված անձի հետ կազմել ջերմային էներգիայի առջ ու վաճառքի համատեղ ակտ, որը հիմք է հանդիսանում գնորդին վճարման փաստաթուղթ ներկայացնելու համար: Ակտը կարող է կազմվել առանձին գնորդի կամ գնորդների խմբի հետ:

4.1.4 Սպասարկել ջերմամատակարարման բոլոր ջերմագծերը մինչև

(նշել սահմանազատման կետը)

Ջեռուցման սեզոնն սկսվելուց առաջ ստուգել ջեռուցման ցանցին միացված շենքի մուտքի եւ ելքի փականները, որպեսզի նրանց փակ վիճակում բացառվի ջրի թողունակությունը:

4.1.5 Ջեռուցման ընթացքում գնորդի՝ ջեռուցումից հրաժարվելու դեպքում կատարել վերջնահաշվարկ՝ դիմումը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում եւ դադարեցնել ջերմամատակարարումը:

4.1.6 Գնորդին ծանոթացնել ՋԵՕԿ-ով սահմանված՝ կողմերի իրավունքների եւ պարտականությունների մասին:

4.2. Գնորդը պարտավորվում է՝

4.2.1 Հաշվարկային ամսվա վճարման փաստաթուղթն ստանալուց հետո _____ օրյա ժամկետում (բայց ոչ ուշ, քան 30 օրում) վճարել հաշվարկային ամսում ծախսած ջեռուցման արժեքը _____:

(հաշվարկային համարը, վճարման կետը)

Նշված ժամկետում չվճարելու դեպքում վաճառողը գնորդին կամ նրա լիազոր ներկայացուցչին նախապես գրավոր զգուշացնելուց 5 օր հետո դադարեցնում է շենքի ջերմամատակարարումը: Այն վերականգնվում է գնորդների խմբի կողմից պարտքը ամբողջապես մարելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում:

4.2.2 Ջեռուցման ժամանակահատվածում ջեռուցվող բնակարանում չբնակվելու կամ բնակարանը ուրիշին հանձնելու դեպքում շարունակել վճարել ջեռուցման վարձը, իսկ բնակարանը վաճառելու (փոխանակելու դեպքում դիմել վաճառողին վերջնահաշվարկ կատարելու եւ պայմանագիրը դադարեցնելու համար, որի համար վաճառողը գնորդին տալիս է տեղեկանք:

Ջեռուցումից հրաժարվելու դեպքում, գրավոր հայտնել վաճառողին, որից հետո վերջնահաշվարկի հիման վրա կատարել ջեռուցման վարձի վճարում:

4.2.3 Իր ներտնային ջերմային ցանցերում կատարված փոփոխությունների հետեւանքով բնականոն ջերմամատակարարման խափանման (նվազման) դեպքում՝ անհապաղ վերականգնել սեփական միջոցներով:

4.2.4 Ապահովել իր բնակարանի ջեռուցման սարքերի ու խողովակազծերի սպասարկումը:

4.2.5 Ջեռուցման համար նախատեսված ջուրը չօգտագործել այլ նպատակներով:

4.2.6 Ջերմային կորուստները կանխելու նպատակով ապահովել բնակարանի ջերմամեկուսացումը:

4.2.7 Ձեռուցվող տարածքը կամ (սխեման) փոփոխելու ցանկության դեպքում գրավոր դիմել վաճառողին՝ պայմանագրում համապատասխան փոփոխություն կատարելու համար:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պայմանագրի 4.2.5 կետի խախտման դեպքում վաճառողը գնորդի կամ նրա լիազոր ներկայացուցչի հետ կազմում է համատեղ ակտ, որից հետո գնորդը պարտավոր է անհապաղ վերացնել խախտումը: Չվերացնելու դեպքում գնորդը պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով եւ սույն պայմանագրով:

5.2. Սույն պայմանագրի պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով եւ սույն պայմանագրով:

6. Այլ պայմաններ

6.1. Ձեռուցման տվյալ ժամանակաշրջանի վերջին ամսում վաճառողը եւ գնորդը կամ նրա լիազոր ներկայացուցիչը փոխհամաձայնությամբ կարող են անդրադառնալ վճարման կարգին՝

(նշել օրերը եւ պարբերությունը)

6.2. Ձեռուցվող տարածքի փոփոխման դեպքում պայմանագրում կատարվում է համապատասխան փոփոխություն. -----

(նշել փոփոխված տարածքի մակերեսը)

6.3. Ըստ ՁԷՕԿ-ի ջերմային էներգիայի մատակարարման եւ սպառման սահմանազատման կետերն են՝

6.4. 4.1.1 եւ 4.1.2 կետերի խախտման դեպքում վերահաշվարկը կատարել ՁԷՕԿ-ով սահմանված կարգով:

6.5. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, 1 տարի ժամկետով եւ յուրաքանչյուր տարի համարվում է երկարացված եւս մեկ տարով՝ նույն պայմաններով, եթե կողմերից որեւէ մեկը չի դիմել մյուսին պայմանագիրը դադարեցնելու կամ վերանայելու առաջարկությամբ:

6.6. Կողմերի միջեւ ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Պայմանագիրը կազմվում է երկու օրինակից, մեկական յուրաքանչյուր կողմի համար:

ՎԱՏԱՌՈՂ՝

ԳՆՈՐԴ՝

"----" ----- 199 թ.

"----" ----- 199 թ.

Կ.Տ.